

եւ զրդճիւք նորին զանց արարեալ է»⁹ : Անձնատուր բոլորանուէր Եկեղեցւոյ, ապրեցաւ անոր համար, անոր շահին, անոր պայծառութեան նախանձախնդիր : Զգաց թէ իր պաշտօնը կը պահանջէ իրմէ գիտութիւն. առանց մերձաւորի սէրէն կաշկանդուելու, առանց հայրենեաց բարձրաբերձ լեռներու, հովասուն վայրերու հրապոյրներուն անսալու՝ առաջուպը ձեռքը ու փնտռեց հեռաւոր օտարութեան մէջ իրեն ուսուցիչ. յարատեւութեամբ, տքնութեամբ եւ զրկանքներով յամեց վարդապետին ոտքը, պայքարեցաւ աներեւոյթ ոգիներու հետ, կ'իջուէ համար անմահարար որթին ողկոյզները : Զարմանք առթեց իր անպարապ ընթերցասիրութիւնը : Ուսման տեւուցութիւնը չյուսալքեց զինքը. եւ ոչ ալ հեզաբարոյ Ուրհայեցւոյ դաստիարակութենէն խիստ եւ աններող կեսարացւոյ ուսուցչութեան փոխանցումը : Անհարթութիւնները ջղապինդ գործեցին անոր ներքին կարողութիւնները :

Պանդխտութեան օրերը շահագործեց անընդարձակելու իւր մտաւոր պաշարը, հարստացնելու իւր ծանօթութիւնները զանազան գիտելիքներով, ծանօթանալու ազգային խընդիրներու, ըմբռնումներու եւ դատումներու եւ սրելու իւր քաղաքական տեսութիւնը : Եղաւ Ամիդ, Եդեսիա, Կ. Պոլիս եւ Երուսաղէմ. շրջեցաւ եգիպտական ճգնարանները, Պաղեստինի վանքերը. թափանցեց վանական հաս-

⁹ Առաքել Դարիժեցի, էջ 302 :